Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2 ministry k. fuch.

Pripravit mirik

ministr-mrzik:

Lkn
1202
2332

Հեղափոխական օրորոցում.

ՏՓԽԻՍՈՒ

“ԹԱՆԴՈՅԵԱՆ,,

ԴՊՐՈՑԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԴՆԵՐԻՆ ԸՆԾԱՅ։

ՓՈՔՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Ն. Գ. Ղ.

ՏՓԽԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ

1881 թ.

Дозволено Цензурою. Тифлисъ, 13 Марта 1881 года.

Типографія А. О. Меликъ-Шахназарьянца, на Мих. мосту, въ д. Мирзоева.

Зф. 1205

4 2332-92

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԵԱՑ ՄԷՋ։

I.

Փոքունչ.— Դուք գիտէք, սիրելի քոյրեր, որ այսօր տօն է. և վարժապետները չեն դայ ուսումնարան. վարժուհին ևս երեկոյեան պատուիրեց, որ այսօրը անօգուտ չանցկացնենք մեր տներումը, այլ դասատանը հաւաքուենք, գիր կարդանք, իրարու բան հարցնենք և գեղեցիկ խօսակցութիւնով տօնը պսակենք։

Երանեակ.— Բայց ի՞նչ գիտենք, որ ի՞նչ խօսինք, աւելի լաւ է որ սպասենք մինչև վարժուհին դայ, մէկ բան պատմէ, և մենք էլ լսենք։

Նոյնենի.— Օհ՛, Երանեակ, դու միշտ պէտք է լաց լինիս, ամենից շատ դու ես կարդում, ամենից լաւ դու ես պատմում և դարձեալ գանգատվում ես, որ իբր թէ ոչինչ չգիտես։ Ի հարկէ, ինչ որ գիտենք նորա վերայ խօսինք, փիլիսոփայութիւն չը պէտք է խօսինք որ այդչափ դժուարացնում ես։

Ոչինչ էլ որ չգիտենանք, միթէ չենք կարող նրա-
տել Եղիշէի պատմութիւնը կարդալ և իրարու
պատմել, որ խիստ լաւ յարմար է, որովհետև այ-
սօր Վարդանանց տօնն է:

Շողակաթ.— (դէպի Վարդանի պատկերը նայե-
լով, որ դասատան պատի վերայ կախուած էր.)
Վարդան ասացիր, ու մէկ բան միտքս եկաւ, որ շատ
անգամ կամեցել եմ հարցնել, բայց չեմ վստա-
հացել:— Ինչո՞ւ Վարդանի պատկերի մօտ իւր ա-
ռաքինի ամուսնոյ կամ մէկ ուրիշ նախնի Հայ կը-
նոջ պատկեր չկայ, որ իմանայինք թէ այն ժամա-
նակի Հայ կանայք ինչ կերպարանք ունէին և ինչ-
պէս էին հագնվում: Ահա Վարդանին նայում ենք,
որ քաջ դիւցազուններից մէկն է.— (ամենքն էլ
նայում են Վարդանի պատկերին.) փեսարաքարդ սա-
ղաւարդը գլխին, պողովատիկ սուրը մէջքին և նա-
խարարանշան դաստակալը ձեռքին: Վառվռուն աչ-
քերն և վսեմախոհ դէմքն ևս ցոյց են տալիս, որ
մտածելումը մեծ խմաստ է և գործելու մէջ եռան-
դուն: Մեր դպրոցը օրիորդաց ուսումնարան է, և
ահա մէկ դիւցազնի պատկեր է կախուած, բայց
ինչքան աւելի ուրախալի կ'լինէր մեզ համար նոյն-
պէս, եթէ մէկ Հայ դիւցազնուհոյ. կամ մի զա-
ւակասէր մօր պատկերն էլ կախուած լինէր այն-
տեղ, որ ամենայն օր նայէինք նորան էլ ինչպէս

Վարդանին: Ճշմարիտն ասած, ես Վարդանին շատ
եմ սիրում և նորա անմահ յիշատակը բոլոր սրտով
պատվում եմ, բայց գիտէք, որ ես աղջիկ
եմ, Վարդան չեմ կարող լինել, բայց եթէ հայ-
ուհոյ բուն հայկական ձևն ու հագուստը տեսել
էի, կուզէի որ նորան նմանէի: Շատ անգամ մտա-
ծում եմ և չեմ կարողացել ճիշդ պատկերացնել
մտքիս մէջ թէ ի՞նչ է Հայ կինը:

Հայկանոյշ.— Տեսաք ահա թէ ինչպէս խօսքը
խօսք է բերում: Սորանից աւելի էլ ի՞նչ լաւ խո-
սակցութիւն կուզէք: Շողակաթը մտածել է Հայ
կնոջ մասին և իւր փափագին չի կարողացել բա-
ւականութիւն տալ: Արդեօք չենք կարող մենք այս
բանի վերայ խօսիլ, որ կարելի է օգուտ քաղել:

Աշխէն.— Կարող ենք խօսել, բայց պարապ
խօսելուց ի՞նչ օգուտ, քանի որ այդ մասին օրի-
նաւոր բան չգիտենք: Ես դարձեալ կասեմ, աւելի
լաւ է որ ամենքս մեր գրքերը վեր առնենք, հան-
գիստ նստենք և կարդանք, քանթէ շատախօսու-
թիւն անենք, որի համար վարժուհին էլ գուցէ
դայ աեսնէ և բարկանայ:

Աստղիկ.— Աստուած սիրես Աշխէն, այդ սուտ
համեստութիւնդ թող. և մեր խօսակցութեանը
արգելք մի՛ լինիր: Վարժուհին օրինաւոր բանի հա-
մար ինչո՞ւ պիտի նեղանայ: Չէ՞ որ նորա նեղու-

թիւնը և զգուշութիւնը դատարկ և անօգուտ խօսքերի համար է: Եթէ հիմիկուանից գեղեցիկ մտածմունքների և խօսակցութիւնների չվարժուինք, էջ որ վերջը մենք էլ այն կանանց նման կ'լինինք, որոնք բամբասանքից աւելի ուրիշ բան չգիտեն, և շատ անգամ էլ պարապութիւնից անմեղ տեղը սորա և նորա վերայ մուր կ'քսեն: Եթէ մենք նորանց նման լինինք, ո՞ւր կ'մնայ ապա մեր ուսմունքը, մեր վերայ եղած խնամքը և յոյսը: Խօսքը լաւ բաների վերայ է բացուած, թող մտածենք ինչքան կարող ենք թէ ինչ է հայ կինը:

Սանենի.— Ահա քեզ նոր փիլիսոփայութիւն: Հայ կինը ի՞նչ պիտի լինի: Հայ կինը նոյի ժամանակից մինչև հիմայ հայ կին է, նոր արարած չէ, որ նորա ինչ լինելը նորից քննենք և իմանանք:

Վարդուհի.— Սաթինիկն էլ Աշխէնի գաղափարն ունի, և աւելի կատակելու փափագ ունի, քան թէ մտածելու և խօսելու, Սաթինիկի համար էլ հայ կնոջ վերայ խօսելը արժէք չունի: Այդպէս են արել որ հայոց ազգի պատմութեան մէջ շատ թէ քիչ հայ մարդու անուն կայ, բայց հայ կնոջ անունը շատ սակաւ կայ: Այդպէս են արել, որ այսօր էլ հայ կանայք իրանք էլ չգիտեն թէ ի՞նչ են, վասն զի ամեն երկրումը իրանց անպհականութիւնը կորցրած ուրիշ ազգերի կանանց են հետևել:

Նուարդ.— Երանի թէ լաւ բաների էին հետևել: Դժբաղդաբար, ինչ որ հին ազգերից առած են հերիք չէ, այսօր էլ լուսաւորեալ ազգերի կրթութիւնը թողած՝ պճնասիրութեանը, շռայլութեանը և ուրիշ պակասութիւններին են հետևում մեզանից շատերը: Ինչ խղճալի բան, կարծես թէ Եւրոպացւոց լուսաւորութիւնը մինչև մեզ հասնելը կ'հանգչի և միայն ծուխը կ'մնայ մեզ:

Շողակաթ.— Հայ կանանց նկատմամբ ասածդ շատ ճշմարիտ է, թէպէտ ես շատ գրքեր չեմ կարդացել, բայց հօրից լսել եմ, որ լուսաւոր ազգերի մէջ կանանցից հեղինակներ կան, զաւակներ դաստիարակող մայրեր կան, մանաւանդ Ամերիկայի կանանց և աղջկանց մասին լսել եմ, որ ոչ թէ միայն աղջկանց, այլ և տղայոց դպրոցների և համալսարանների մէջ անգամ դաստիարակները կանայք են: Գիտէ՞ք ինչու համար. որովհետև կին դաստիարակները աւելի փափկասիրտ, համբերող և զգայուն են, և բան պատմելու ժամանակ աւելի յաջողակ են: Այժմ ձեզ եմ հարցնում, հայ կանայքը այս գեղեցիկ յատկութիւններն ցանկանում են արդեօք ստանալու: Թողնենք դպրոցների ուսուցչութիւնը, գոնեա աշխատում են արդեօք ընտանեաց մէջ իւրեանց զաւակները կրթելու չափ դաստիարակութիւն ստանալու: Ասացէք, խնդրեմ, կան

արդեօք այնպիսիք:

Փառանչեմ.— Ոչ մէկը չկայ, այլ միայն նորասիրութիւն և աչքի խաբելու զուքս: Երանի թէ իրանց ունեցած քիչ թէ շատ շնորհքն էլ չէին կորցրել: Ասում են թէ մի քանի քաղաքներում այնպիսի հայեր կան, որ հայերէն անգամ խօսել չգիտեն, բայց նորանցից շատերն էլ փողեր չեն խնայում ուրիշ լեզուներ սորվեցնելու համար: Այնպիսիներն էլ կան, ուսելու հաց չունին, բայց ստիպուած են շատ անգամ քաղցած մնալ և իրանց կանանց և աղջկերանց նորասիրութեան ամեն հաճոյքը կատարել և նորանոր զարդերով զուքել: Բայց ի՞նչ օգուտ, Սիրամարգն էլ գեղեցիկ փետուրներ ունի, սակայն ոտները ածուխի պէս սև են: Այսպէս էլ անկիրթ և պճնասէր կինը և աղջիկը: Ինչ որ անեն դարձեալ իւրեանց անկրթութիւնը կամ տգեղութիւնը կ'երևայ: Մանաւանդ որքան ամօթ բան է երբ որ կինը իւր ամուսնոյ և աղջիկը իւր ծնողաց կարողութիւնից բարձր է զարդարուած: Ո՜հ, որքան խղճալի բան է, երբ որ կինը իւր արժանաւորութիւնը զարդարանքի մէջն է փնտռում:

Նաղշենի.— Աւելի լաւ է ասել, այդ ամեն պակասութիւնները չափաղանց տգիտութեան հետևանքն է: Այն կինը, որ իւր զաւակաց դաստիարակութիւնը թողած, և զարդերու վրայ է մտածում տգէտ է: Այն կինը, որ հանրասիրութիւնով իւր ամուսնոյ սիրտը կ'դառնացնէ տգէտ է: Այն օրիորդը, որ իւր արտաքին ձևերով կուզէ ամուսնանալ և ոչ թէ իմաստութիւնով և վայելուչ վարմունքով, տգէտ է: Այն կինը, որ մտածել և դատել չգիտէ, այլ միայն խելքը աչքերու մէջն է տգէտ է: Ո՞ր մէկն համարեմ, ընտանեկան խռովութիւն, ամուսնական սառնութիւն, զաւակաց անխնամութիւն և ամեն տեսակ պակասութիւնը բոլորն էլ տգիտութեան հետևանքներ են: Քանի որ կանայք և աղջիկները մտածելու և լաւն ու վատը որոշելու չեն վարժած. զարմանալի բան չէ ուրեմն, որ շատերի մէջ ոչ թէ լուսաւորեալ կանանց առաքինութիւնները կ'մնանեն այլ մոլութիւնները: Երանի՜ թէ հայ կանայքը, նորասէր լինելու տեղ մաքրասէր լինէին, թէ ընտանեկան կեանքի մէջ և թէ հաղուստի: Պարզ հագնել և պարզ ապրել սիրել, և երկուսի մէջն էլ մաքրութիւն էին պահպանել: Ես այնպէս գիտեմ որ, մաքրասիրութիւնը ամեն բանից թանգ արժէ:

Սաքենի.— Նայէ, նայէ, Երանեակ, թէ որտեղից սկսեցին և ո՞ւր եկան, իբր թէ պիտի բացատրէին թէ ի՞նչ է հայ կինը: Հիմայ սկսել են գիտութեան և մաքրութեան վրայ խօսել, սոցա եթէ

թողնես, մինչև երեկոյ չեն վերջացնի, սոցա խոսածն էլ մեկ նոր ձևի քարոզութիւն է, Հայ կինը բնաբան դնել և ուրիշ բաների վրայ խօսիլ: Ի հարկէ անձնապաստանները այսպէս են լինում: Աւելի լաւ չէր լինի առաջուց խոստովանվել էին, որ Հայ կնոջ վերայ խոսելը իրանց խելքի բան չէ:

Ն-ն.— Ներեցէք, Սաթենիկ, լաւ քարոզիչներն էլ շատ քարոզելով են գեղեցիկ խոսակցութեան վարժվում: Ամեն բանը աշխատութիւնով և փորձով կ'լինի: Երևելի մարդիկ և կանայք իւրեանց մօրից ուսումնական չեն ծնուել: Այսօր այսպէս կը խոսենք, վաղը ուրիշ տեսակ, եթէ շարունակենք, կարելի է յետոյ աւելի կարգով և գեղեցիկ խոսենք:

Ելենիկ.— Սոքա մոքումը դրել են, որ ամեն օր շատախօսութիւն անեն: Դեռ ուսում չառած վարդապետ են դարձել: Ահա քեզ թեթևամտութիւն. բարով վայելէք ձեր նոր աստիճանները: Բան չունիք որքան կամենաք խոսեցէք: Բայց իմացէք որ Հայ կնոջ վերայ պիտի խոսէիք և հիմայ խոսքը գտնելու համար սար ու ձոր էք ընկել: Հայաստանից Ամերիկայ հասաք: Զգոյշ կացէք, որ ծովերի մէջ չ'ընկղմիք: Բայց ինչ, ձեր ճանապարհորդութիւնն էլ մի նոր օրինակ է, հեռագրիցն էլ շուտ է հասնում, որովհետև խոսքով, կամ աւելի լաւ

է ասել, մեկ օդային ճանապարհորդութիւն է: Ինչ երկիր կամենաք թափառեցէք, նոցա կանանց էլ մի՛ չեցէք եթէ բան չունիք, սակայն իմացէք, որ Հայ կնոջ վերայ խոսելուց հեռացաք, վասն զի այս մասին օրինաւոր խոսելն ձեր խելքի բան չէ:

Փ-ն.— Շատ խստութիւնով ես դատում մեզ. երանեակ, և կամենում ես որ մեզ էլ բարկացնես, որ կամ ամենևին չ'խոսինք, իսկ եթէ խոսինք, ուրեմն օրինաւոր խոսակցութիւն լինի: Բայց մենք չենք նեղանալ պատճառն որ, գուցէ մեր խոսքերն չ'կատարուին, սակայն մեր փափագը բարի է: Ուրեմն մեր խոսակցութիւնն էլ պէտք է շարունակենք, վասն զի համոզուած ենք, որ եթէ օգուտ չ'քաղենք, վնաս էլ չենք ստանայ:

Սանենկ.— Ժամանակը որ կորչում է՞, մի՞թէ ձեզ համար ժամանակը գին չունի: Գիտէք ժամանակը ոսկի է, չէ՞ք իմացել:

Վարդուհի.— Կարծես թէ ժամերդ և վայրկեաններդ բոլորը հաշուած և նորա համեմատ ես աշխատում: Իբր թէ չենք տեսել, որ շատ անգամ դրքիդ նայել ես բայց միտքդ ուրիշ տեղ է եղել: Իբր թէ չենք տեսած, որ շատ անգամ սուտ պարկեշտ ձևանալով երկար ժամանակ լուռ ես մնում, բայց հազարից մի անգամ բերանդ բաց ես անում, բոլոր ընկերներիդ սրտերը վերաւորում ես: Իբր թէ

օրինաւոր խօսակցութիւնը ժամանակի կորուստ է և ժամանակի գիւտը միայն գրքին նայելն է, ոչ թէ կարդալու համար, այլ ուրիշները խաբելու: Աստուած սիրես, մի՛ խափանիր, թո՛ղ խօսի փառանձեմը և մենք էլ լսենք:

Շողիկոս.— Այո՛, կ'լսենք փառանձեմ, խօսի՛ր Հայ կանանց վերայ: Բայց չգիտեմ հին ժամանակի, թէ այժմեան Հայ կանանց վերայ պիտի խօսես, որովհետև, ես կարծում եմ, որ երկուսի մէջ մեծ տարբերութիւն կայ:

Փառանձեմ.— Այժմեան Հայ կանանց վերայ ի՞նչ պիտի խօսիմ, և մանաւանդ ի՞նչպէս կարող եմ խօսիլ, երբ մեր խեղճ ազգը զանազան երկիրներումը և ազգերի մէջ ցրուած լինելով՝ կանայք միայն Հայութեան անուն են կրում: Լեզուն օտարի, հագուստն օտարի, սովորութիւնն օտարի, միանգամայն ամենն էլ օտարի . . . . . : Այսօր էլ, եթէ ամեն երկրից մէկ մէկ Հայ կանայք հաւաքես, պարզ կ'տեսնես, որ ամենքն էլ միմիանցից մեծ տարբերութիւն ունեն: Ուրեմն թողնենք այժմեան կանանց և հինների վերայ խօսենք: Արդարև, թէպէտ հնութիւնը գարերով հեռու է մեզանից և ներկայն աւելի մօտ, բայց Հայի հնութեան մէջ քաղցրութիւն աւելի է քան թէ ներկայի մէջ:

Եպիսկ.— Բայց հնութեան վերայ ի՞նչ պի-

տի խօսիս: Մեր ազգի չորս հազար տարուան պատմութիւնը եթէ քննես, հազիւ թէ քառասուն Հայ կնոջ անուն գտնես, և այն էլ կամ թագուհի են կամ Մարտիրոսուհի: Նորանցով ի՞նչ կարելի է իմանալ, թէ հին Հայ կանայքը ի՞նչպիսի էին և ի՞նչ տեսակ, նոյնպէս և հասարակ կարգի կանանց կենցաղավարութիւնը և կրթութիւնը:

Շողիկոս.— Իրաւունք ունիս ասելու Նազենիկ, հնութեան մէջ կանանց վերայ շատ չէ խօսուած, և թէ պատմութեան մէջ մի քանի տեղ կանանց յիշում են, այն էլ Քրիստոնէութիւնից յետոյ է: Որովհետև ես լսած եմ, որ հեթանոսութեան ժամանակ կինը մի անպատիւ և սարուկ է համարուած եղել, ինչպէս այժմ շատ տեղ միայն թէ Քրիստոնէութիւնը միայն կանանց արժանաւորութիւնը հաստատեց: Մարդկութիւնը միայն այն ժամանակը կ'հասնի կատարելութեան, երբ ոչ թէ միայն տղամարդիկ, այլ և կանայք ճշմարիտ Քրիստոնէական լուսով դաստիարակուած կ'լինին: Նորա համար որ, կանայքը մարդկութեան կէսն են, և անկարելի է որ մէկ կէսը առաջանայ քանի որ միւս կէսը տգիտութեան մէջն է: Փառանձեմն էլ եթէ խօսի, ես այնպէս եմ, կարծում, որ Քրիստոնէութեան ժամանակուայ Հայ կանանց վերայ պիտի խօսի:

Սաֆենիկ.— Քրիստոնէութեան ժամանակից սկսեալ քանի՞ հայ կանանց անունը կարող ես տալ:

Փանջեմ.— Շատ անուններ տալու կարողութիւն չունինք, բաւական է միայն որ նոցա գործքերը յիշենք։ Նորա համար որ, մեզ համար գործքը անունից աւելի է հարկաւոր:

Երանեակ.— (Սաֆենիկին նայելով) անպատճառ Եղիշէի պատմութիւնից խօսելու է բան: Քանի օր է, որ Եղիշէի գիրքը ձեռքին կարդում է: Հա, եթէ օրինաւոր բան գտած լինի հայ կնոջ համար, ոչինչ չենք կարող ասել: Բայց ես գիտեմ, որ հայ կանանց վերայ խօսելը իւր կարողութիւնից բարձր է:

Փանջեմ.— Այո՛, այո՛, Եղիշէից պիտի պատմեմ և յուսով եմ, որ դուք էլ ձեր հակառակախօսութիւնը մի կողմ պիտի դնէք:

Ն.— Պատմէ՛, փառանձեմ, հակառակախօսութիւնն էլ շատ անգամ խօսակցութեան մէջ օգտաւէտ է, եթէ բոլորովին կամակորութիւն չէ, մենք այնպէս ենք հասկանում, որ Երանեակի և Սաֆենիկի ասածը աւելի խնդիրը պարզելու համար է: Նոքա էլ կընդունին ինչ որ բարի և օգտակար է: Նոքա լսել են թէ շատ խօսելը անվայել է օրիորդաց համար, բայց չգիտեն որ անվայելը, վատ խօսակցութիւններն են և սուտ պարկեշտութիւնը: Եթէ ամեն խօսակցութիւնը վատ բան լինէր, Ա-

տուած լեզու չէր տայ կանանց: Ամեն կին կամ օրիորդ լաւ բան խօսելու համար միշտ ազատ է, և միայն անպարկեշտ խօսքեր են, որ կնոջ ամեն շնորհքները կ'ոչնչացնեն: Խօսիր ուրեմն և պատմէ՛, փառանձեմ, մենք պատրաստ ենք ուրախութեամբ լսելու:

Փանջեմ.— (Եղիշէի պատմութիւնը վեր է առնում, որ տեղ նշաններ էր դրել մանաւանդ այնտեղ, ուր յատկապէս հայ կանանց վերայ է խօսում): Այս գեղեցիկ պատմութիւնը ես չպիտի բառ առ բառ կարդամ, այլ պիտի իմաստներ պատմեմ աշխարհաբար և պարունակուած օգտակար հետևութիւններն էլ յայտնեմ:

Շողջամալ.— Շուտ արա, Աստուած սիրես սիրոս թռթռում է, կ'ուզեմ շուտով իմանալ՝ թէ ի՞նչ պիտի ասես հայ կանանց վերայ:

Ն.— Ամենքս էլ լսենք, ինչ որ կ'պատմէ բոլորն էլ լաւ բաներ կ'լինին:

Փանջեմ.— (Պարզ ձայնով և ծանր կերպով) Երբ Պարսիկները տարիներով աւերեցին Հայաստանը և շատ նախարարազուն և դիւցազուն մարդիկ գերի տարան Պարսկաստան՝ հայ կանայքը ամենևին չ'յուսահատուեցան և չ'թուլացան, այլ մուռացան իրանց կանացի տկարութիւնը տղամարդկանց պէս արիացան հաւատոյ պաշտպանութեան պատերազմի

մէջ, ամեն մոլութեանց յաղթեցին, և Աստուա-
ծային սիրով վառուած աղօթքով երկնքի դռները
բաց արին: Ուրեմն, աստուածպաշտութիւնը և բա-
րեպաշտութիւնը կանանց առաջին պարտքն է: Ամեն-
քը,— Այո՛, այո՛: Փառանձեմը (շարունակում է.)
Հայ կանայքը Սուրբ գիրք էին կարդում, իւրեանց
զաւակները բարեպաշտութեան մէջ էին կրթում,
և ամեն նեղութիւնները աստուածային սիրով էին
քաղցրացնում: Ուրեմն զաւակները մանուկ հասակից
բարեպաշտութեան մէջ դաստիարակելը, մայրենի
լեզուն սորվեցնելը, նոցա սրտին մէջ աստուածասի-
րութեան և մարդասիրութեան զգացմունքները զար-
թացնելը՝ կանանց երրորդ պարտքն է: Ամենքը,—
Այո՛, այո՛: Փառանձեմը, (շարունակում է:) Հայ
կանայքը իւրեանց մատներով աշխատում ու կերա-
կրվում էին, իւրեանց չափաւոր և պարզ կեանքով
ընտանեկան կենցաղավարութիւնը քաղցրացնում էին
և իւրեանց բանտարկուած ամուսինների համար
իւրեանց ռոճիկները ուղարկում էին: Ուրեմն չա-
փաւորութիւնը ընտանեկան կեանքի հաստատուն
հարստութիւն է, տնարարութիւնը և ձեռագոր-
ծութիւնը՝ կանանց չորրորդ պարտքն է: Ուրեմն տան
հարատութիւնը կինն է, տան թագուհին կինն է
և օրինաւոր ընտանիքը մի փոքրիկ թագաւորու-
թիւն է: Ամենքը,— Այո՛, այո՛:

Նորայր.— Գուցէ այդ պատճառաւ է որ սուրբ
եկեղեցին էլ պսակի ժամանակ նորափեսային՝ թա-
գաւոր է անուանում, իսկ Նորահարսին թագուհի:

Փառանձեմ.— (շարունակում է) Հայ կանայքը
չմոռացին իւրեանց առաջին վայելչութիւնները,
փափկութիւնը և ստացուածքը, նախարարների կա-
նայքն անգամ ուրախութիւնով սկսեցին հասարակ
կեանք վարել: Ուրեմն, կինը պիտի իշխէ փափկա-
սիրութեանը և վայելչասիրութեանը, պէտք չէ որ
անձնատուր լինի անցողական բաների, այլ պիտի
այնպիսի կրթուած սիրտ, միտք և կամք ունենայ,
որ իւր ամուսնոյ, իւր որդոյ, իւր ազգի և մանա-
ւանդ Աստուծոյ սիրոյ համար կարողանայ հարկ ե-
ղած ժամանակը ամեն բան ուրախութիւնով թող-
նել: Ամենքը,— Այո՛, այո՛: Փառանձեմը (շարունա-
կում է) Հայ կանայքը իւրեանց պարզ և առաքի-
նի կեանքով քաղցրացին իւրեանց կապուած և
վշտացած ամուսիններին նեղութիւնների մէջ մխի-
թարեցին նորանց սրտերը, և անարատ պահպանե-
ցին Հայ գերդաստանի և Հայրենեաց անունը: Ու-
րեմն, կինը մարդու մխիթարութիւնն է, գերդաս-
տանի սիւնը և Հայրենեաց հաստատութիւնը: Բայց
այս արժանաւորութեանը արմատն էլ բարի դաստ-
իարակութեան մէջն է: Ինչ տեղ բարի դաստիա-
րակութիւն չկայ՝, այնտեղ կնոջ արժանաւորու-

93332-99

թիւնը մեռած է, և ուր մեռած է այս արժանաւորութիւնը, իմացէք, որ մեռած է ամենայն ինչ: Նորա համար որ, միակ ազգի կենդանութիւնը առաքինի կանայք կամ մայրերն են: Ամենքը,—Այո՛, այո՛: Ուրեմն, առաքինի կանայքն և մայրերը կարող են միայն լինիլ Հայութեան կենդանութիւնը:

———ᴗᴗᴗ———

II.

Սէքո՜հի,— Տեսէ՛ք տեսէ՛ք, (ամենքը ցոյց տուած կողմն են նայում), ձեռագործ վաճառող Մարգարիտը գալիս է, ինչպէ՞ս պարզ հագուստ, ի՞նչ ուրախ դէմք:

Մարգարիտ.— Բարև ձեզ օրիորդներ:

Աղջիկ.— Բարև եկաք, այդ իրեղէնները դուս գործել:

Մարգարիտ.— Այո՛, սոցանից աւելի գեղեցիկները տանն ունիմ:

Թագո՜հի.— Երանի՛ քո համբերութեանդ, ես շարունակ կէս ժամ չեմ կարող նստել և աշխատել: Ծնողներս էլ բնութիւնս գիտենալով ամենևին չեն աշխատեցնում ինձ, հագուստներս էլ կամ կարած են գնում, կամ ուրիշի են կարել տալիս:

Վարդանոյշ.— Իսկ ես, եթէ փոքր ինչ աշխատեմ, հոգիս բերնիս կ'մօտենայ: Անցած օրը մեր սպասուհին իւր ծնողաց տեսութեան էր գնացել, մինչև սենեակները մաքրեցի, հաղար անգամ սպա-

սուհուն անիծեցի, որ տան սպասաւորութիւնը քիչ ժամանակ իմ վերայ թողեց:

Շուշանիկ.— Փառք քեզ Աստուած, ես, ամեն օր աշխատում եմ, տան ամեն բանը շինում եմ, մաքրութիւն, լուացք, կար ու ձև, կերակուր և այլն. այս ամեն բաները ես եմ կատարում, բայց ես, ոչ նեղանում եմ և ոչ գանգատվում: Բացի դորանից ուրիշների համար էլ կար եմ անում: Իսկ թագուհին և Հայկանուշն իւրեանց հագուստներն անդամ պատրաստի են հագնում, և տան մէջ թեթև սպասաւորութիւններն էլ դժուար է թվում:

Թագուհի.— Ծնողներդ հարստութիւն չեն թողել, եղբայրներդ էլ այնքան կարողութիւն չունին որ սպասուհի վարձեն, Ի հարկէ ամեն բանը դու պիտի անես: Ուրեմն, դորան յօժարութիւն չեն ասի, այլ անձարութիւն, ինչպէս առածն է ասում թէ «Անձարն է կերել բանջարը»:

Շուշանիկ. Թագուհի, հաւատացիր որ իմ աշխատութիւնս յօժար կամքէ է և ոչ անձարութիւնով, իմ մօրս պատուէրը միշտ այս էր, թէ ամենից մեծ և անկորուստ հարստութիւնը «Աշխատութիւն և ճշմարտութիւն է.» ինչպէս որ կնոջ կամ աղջկայ փառքն ու պատիւն է տանտիկնութիւն: Նիւթական հարստութիւնը շատ անդամ մէկ վայրկեանի մէջ ոչնչանում են, բայց աշխա-

տանքը հաստատուն հարստութիւն է և աշխատասէրները երբէք անօթի և ոչինչ բանի կարօտ չեն մնայ: Ես մինչև մահս չեմ մոռանալ իմ ծնողաց պատուէրը, որ մանկութիւնից սկսեալ աշխատանքին և անտեսութեան մէջ վարժեցրին ինձ: Ուրեմն կարող եմ ասել, որ արածս ճարահատութիւնից չէ այլ սովորութիւնից է: Ինչպէս որ քեզ համար աշխատութիւնը ձանձրալի է, նոյնպէս էլ ինձ համար պարապութիւնը:

Սրբուհի.— Ինձ համար էլ նոյնպէս, թողնենք այն, որ ուրախութիւնով մօրս օգնում եմ և ամեն բան կատարում եմ, բացի նորանից որ, օրը մէկ ժամ աւելի նստում եմ և զանազան օգտակար գրքեր եմ կարդում, և շատ անդամ էլ հ.րս նամակները և վաճառականութեան թղթերը մաքուր արտագրում եմ, և այս ամեն բանը ինձ համար մի գեղեցիկ զբօսանք եմ համարում:

Վարդանոյշ.— Թագուհի, այս խեղճերը դեռ աշխարհիս համը և ճաշակը չգիտեն, նորա համար էլ աշխատութիւնը զբօսանք են համարում, քանի որ մեր զբաղմունքն է ժամերով զբօսնելը, գոնեա շաբաթը մի անդամ պարահանդէսների մէջ գրանուելը, նորաձև զգեստներից երբէք չզրկուելը միանգամայն ամեն ուրախութիւնները վայելել:

Թագուհի.— Ուղիղն ասում, զբօսանքից զբր-

կուիլը ինձ համար մահ է: Մանկութիւնից այսպէս վարժուած եմ, հագնվելու, զուգվելու, և զուարճանալու...:

Մարգարիտ.— Այո՛, այդպէս է, քաղաքիս մի քանի օրիորդները և կանայք մէկ մէկ չաստուածուհի են դառել և իւրեանց ծնողները և ամուսինները իւրեանց սարուկներն են շինել: Բայց ո՞վ գիտէ թէ շատ անգամ հենց իսկ ծնողներն և ամուսինները չեն պատճառ այս բանին ինչ և իցէ, ես այս տեսակ պատմութիւններ անելու ժամանակ չունիմ, ասացէք, ինդրեմ օրիորդներ, ձեռագործերս պիտի գնէք թէ ոչ:

Վարդանոյշ.— Ահա քեզ նոր բան. Մարգարտի հոգսն էլ իւր ձեռագործերն են: Սա էլ կամենում է որ մի քանի դրամ աշխատի, ո՞վ գիտէ, կամ հայրն է անօթի կամ.....

Մարգարիտ.— Օրիորդներ, իմ հայրն ու մայրը անօթի չեն, բայց աշխատանքով դրամ վաստակելն էլ ամօթ բան չէ: Փոխանակ ձեզ նման հոր աշխատանքով հագնվելու, աւելի ուրախութիւն է ինձ համար իմ ձեռքի աշխատանքով հոգալ իմ հարկաւորութիւններս, որն որ շատ քաղցր է ինձ համար: Ցուսով եմ մինչև անգամ ինձ համար օժիտ ևս (բաժինք) պատրաստել:

Շուշանիկ.— Սրբուհի, երանի թէ ձեռքս դրամ

լինէր, առանց խօսելու կ'տայի ինչքան որ կ'պահանջէր ինձանից այս պարզասիրտ աղջիկը իւր ձեռագործի համար:

Սրբուհի.— Ճշմարիտն ասեմ, ես էլ ձեռքիս դրամ չունիմ, ապա թէ ոչ ձեռագործերի գնելուց աւելի իւր սիրտն ու աշխատութիւնը առաւել արժանի են վարձատրութեան:

Թագուհի.— Ի՞նչ շատ զմայլեցաք Մարգարտի վերայ. ի՞նչ կայ այդքան զարմանալու: Միթէ՞ ձեռագործեր չէ՞ք տեսած: Եւրոպայից հազար անգամ աւելի գեղեցիկներ են բերում ծախելու: Քանի՞ հատ կամենաք, կարող եմ ձեզ ցոյց տալ որն որ ծընողներս ինձ համար գնել են:

Շուշանիկ.— Մենք ձեռագործի վերայ չենք զարմանում, Թագուհի, և գիտենք որ Եւրոպայից աւելի գեղեցիկներ է գալիս, բայց մեր սրտի գրաւողն աւելի այս Հայ աղջկայ աշխատանքն և պարզասրտութիւնն է: Մենք ուրախանում ենք նորա վերայ, որ մեր աչքով տեսնում ենք, որ Եւրոպացու արածը Ասիացին կարող է շինել եթէ աշխատի: Տեսնում ենք որ աշխատանքը ամեն տեղ իւր արդիւնքն ունի, ամեն բան Եւրոպայից սպասել, ամեն բան Եւրոպայից գնել այս էլ մեծ պակասութիւն է և մանաւանդ մեծ յանդիմանութիւն Ասիացւոյ ծուլ-

լութեան: Մարդիկ և կանայք ամեն երկրումը նոյն են. միայն աշխատանքն է որ Եւրոպացին Ասիացի-ներից է որոշում: Միայն ուսումն ու կրթութիւնն է որն որ մեկը գովում է միւսը պարսաւում է: Աշխատանքը, ուսմունքը, և ահա ամենքը հաւասար են:

Վարդանոյշ.— Աստուած սիրէք, քարոզ մի՛ կարդաք, ամեն մարդ իւր գործը լաւ է ճանաչում, որքան կամենաք խօսեցէք, ձեր ձեռքը բռնող չկայ, բայց ուրիշների ազատութեան դէմ էլ մի՛ խօսիք:

Սրբուհի.— Կարծում էք որ պարապ մնալը ազատութիւն է, իսկ աշխատանքի վերայ խօսելը ազատութեան դէմ բամբասանք է: Ի՜նչ ծուռը հասկացողութիւն, որքա՜ն թերի դատողութիւն: Ազատը նա է, որ ուրիշի աշխատանքով չի ապրում Ազատը նա է, որ մօդաների գերի չէ դարձել, ազատը նա է, որ հաստատ կամք ունի բարին ու օգտակարը գործելու չար և վնասակար բաներից հեռանալու, ազատութիւնը մենք այսպէս ենք հասկանում:

Շուշանիկ.— Ի՞նչ հարկաւոր է երկար խօսել Սրբուհի՛, քանի որ ասածներդ միայն դու պիտի հասկանաս: Դու կարծում ես որ Թադուհին ու Հայկանոյշը չգիտե՞ն, որ աշխատութիւնը պարապութիւնից լաւն է: Մի՞թէ կարծում ես որ պիտի

համոզուին ասածներովդ: Ես չեմ կարծում, նորա համար որ համոզելու համար կամք է հարկաւոր, քանի որ կամք չկայ, հետևապէս համոզուելն էլ շատ դժուար է: Ուրեմն, խնդրում եմ որ այդ հարցի վերայ խօսելը դադարեցնենք:

Թադուհի.— Ինչո՞ւ թող խօսի:

Հայկանոյշ.— Այո՛, թո՛ղ խօսի գուցէ պիտի համոզէ մեզ:

Սրբուհի.— Կամենաք համոզուեցէք, կամենաք մի՛ համոզուիք: Ես իմ կողմից հաստատ համոզուած եմ, որ թէ հարուստ և թէ աղքատ, ամենքն էլ պարտաւոր են աշխատել: Ես համոզուած եմ որ կանանց և օրիորդաց մաքրասիրութիւնը և պարզակեցութիւնը ընտանեկան կեանքի զարդն է: Ես համոզուած եմ, որ տանտիրութիւնը, ասղնագործութիւնը և բարի վարքը իդեական սեռի գեղեցիկ պսակն է: Ես ճանաչած եմ վերջապէս, որ օրինաւոր կրթութիւնը համեստ և ամօթխած վարմունքը և աշխատասիրութիւնը աղջկանց ամենամեծ օժիտն է, որով կարող են արժանաւոր մայրեր և տանտիկիններ լինել: Ահա՛, այս է իմ համոզումը, այս իմ ցանկացածը:

Մարգարիտ. Երևում է, որ դուք ձեռագործերս չպիտի գնէք, վնաս չունի, առնողներ շատ կան, Աստուած անպակաս անէ բարեսիրիտ պարոնայք և

տիկնայք: Ուրեմն մնաք բարեաւ: Ամենքը գնաք բարեաւ:

Ասողն.— Երկար ժամանակ է որ կերպարանքը մի տխուր երևոյթ է ցոյց տալիս որոյ պատճառը չեմ կարողացել դուշակել մինչև հիմայ, իրաւի շատ անգամ ծածուկ հետազօտութիւններ արի, բայց ոչ մի տեղեկութիւն չստացայ. իսկ այսօր համարեա թէ այստեղ ձեզ հետ առանձին տեսնուելու բաղդ ունեցայ, վստահ եմ, որ ձեր տրտմութեան պատճառն իմանալու պատիւ կունենամ:

Տ-ուհի.— Այո՛, ինչպէս որ կարծում է՛ք, ուղիղ է, ես ես զգում եմ որ մոքիս յուզմունքը կերպարանքիս վերայ տրտմութիւնով և միանգամայն տխրութիւնս մեծ փոփոխութիւն է արած իմ վերայ. սակայն ի՞նչ անեմ որ այս վիճակիս մէջ ինձ մի համակրող ընկեր չունիմ, տրտմում եմ, ինձ ցաւակից չունիմ, շփոթվում եմ, ինձ մխիթարող չունիմ, շատ անգամ երբ որ, ընկերներիցս իմ ներկայ վիճակիս համար թեթևութիւն չեմ գտնում յուսահատվում եմ, և առանձին տեղերումը քաշուելով իմ քամբաղդութեանս վերայ ողբում եմ: Վերջապէս խօսք չերկարացնելու համար, դուք իմ տրտմութեանս պատճառը հետաղօտանցէք, ուստի ահա բացատրեմ ձեզ. ողբում եմ

այն օրը, այն վայրկեանը, որ իմ ականջները դըստրոցի ձայնը լսեցին, և իմ թոթով լեզուս վարժատուն բառը արտասանեց:

Ասողն.— Ո՛հ, Օրիորդ, այդ գաղափարդ ի՞նչ այլանդակ մոքի արդիւնք է մի՞թէ մարդ կարող է իւր երջանկանալու օրը անիծել կամ իւր բաղդաւորեցնողի անունը արհամարել: Ճշմարիտ որ ես զարմանում եմ:

Տ-ուհի.— Ահա, ես փաստերով ապացուցեմ իմ ասածները, բաղդաւորութիւն և քամբաղդութիւն, որոնց նշանակութիւնն էլ շփոթուած է մի քանի կարճամիտ մարդկանցից: Բաղդաւորութիւնը որ բարութիւն վայելել է նշանակում, իւր բուն սահմանից հեռանով, իբրև թշուառութիւնից մեր ծնողքը զգուշացնում են նորանից. և անբաղդութիւնը որ ամեն տեսակ լաւութիւնից զրկուել է նշանակում, իբրև թէ երջանկութիւն ստիպում են մեզ ծնողները որ ընդունենք: Ուրեմն, այսքան նեղութիւնները քաշելով չտրտմե՞մ, չտխրե՞մ, չողբա՞մ: Փեղ մի բան հարցնեմ. դու, որ դպրոցումը մանում և նստում ես, ի՞նչ վայելչութիւն կամ երջանկութիւն ես զգում: Եթէ աշխատութիւնը բաղդաւորութիւն է, մեր տան մէջն եղած խօսակցութիւնները, ընկեր ընկերի հետ արած ուրախութիւնները և զուարճութիւնները, աւելի երջանկու-

թիւն կ'համարուին քան թէ կարդալը և գրելը, և ինչ մարդ որ բնականապէս շատ ազնիւ զգայման տէր է, իւր երջանկութիւնը մեռեալ տառերի և գծերու մէջ չէ փնտրի, մանաւանդ որ առանց մեր լեզուի նոքա չեն էլ կարդացվում:

Աղեքս.— Սխալվում էք օրիորդ, գոնեա որքան ես հասկանում եմ, երջանկութիւնը, ձեզ պիտի բացատրեմ. քո կարծեցած երջանկութիւնը ես տարաբաղդութիւն եմ հասկանամ, նորա համար որ այն խօսակցութիւնները, ընկեր ընկերի հետ արած զուարճութիւնները, որն որ բաղդաւորութիւն էք համարում, ոչ միայն դատարկ բաներ են և մեր մանկական հասակին հետ ոչնչութեան մէջ են գլորվում, այլ նաև շատ անգամ մեր կենաց առաջիւը թշուառութեան անդունդներ են բացվում, ոնդունդներ որոնք յաւիտենական գերեզմաններ են մեզ համար:

Աբրահամ.— Օրիորդներ, որքան որ ձեր խօսակցութիւնը առանձին էր, հանգամանքը այնպէս բերեց որ, ես ևս պիտի մասն ունենամ այդ խօսակցութեան մէջը, ձեր խօսակցութիւնը մարդուս թշուառութեան և երջանկութեան վերայ էր որին մի օրինաւոր որոշումն տալը որքան որ ձեր անչափահաս հասակի կարողութիւնից բարձր է, բայց դարձեալ գովում եմ ձեր սրտի եռանդը վասն զի,

երկուսդ ևս բաղդաւորութիւն էք փնտրում և թշուառութիւնից փախչել էք ուզում, ուրեմն դուք ցանկանում էք բարոյն մնտենալ իսկ չարից փախչել: Բայց այդ մի այնպիսի դժուար խնդիր է որ, ոչ միայն դուք, այլ շատերը կ'դժուարանան այդ խնդիրը օրինաւոր լուծելու: Ուրեմն, լսեցէք, որքան կարող եմ, կ'բացատրեմ ձեր սրտի ցանկալին: Մենք այս կեանքումը ինչ որ գործում ենք, այն ամենը ընտրութիւն ենք համարում, ըստ որում այն է մեզ հաճելի թվում. բայց մեզ միշտ մեծամեծ փորձանքներ են հանդիպում մեր կենաց մէջ անփախչելի որոդայթների մէջ զցելու. ամեն կողմից հակառակ դիպուածները մեր հոգւոյ բարեմասնութեան կարգերը շփոթում են այն բարեմասնութիւնները, որոնցով երջանկութեան յոյս ունինք: Բայց Աստուած որ 'ի սկզբանէ մարդասէր է, ուստի միշտ մարդոց յաւիտենական բարեաց վերայ հոգում, և այս մոլորուած ճանապարհի մէջ մեզ առաջնորդ տուեց իւր լուսաւորութիւնը, որ բոլոր բարութեանց պատճառն է, ինչպէս որ չարութեանց պատճառն էլ տգիտութիւն է: Լուսաւորութիւնը, որ ճշմարիտ և արդար բաները խաբեբայ և վատ բաներից որոշելով, նորանց օգտակար և պետքական լինելն է ցոյց տալիս մեզ: Ըստ որում լուսաւորութիւնը տալիս է մեզ առողջ դատողութիւն և

սահման է դնում մեր անհատատ կամքին: Այս պայծառ և մաքուր իմանալի լուսոյ միջնորդութիւնով մարդս ղիմում է դէպի արդարութիւն. յետոյ հասկանում է որ օգտակար է օրէնքին հնազանդիլը. և օրինաց հնազանդիլը առաքինութիւն է. վասն զի նա արդելում է միանգամայն ոչ միայն մարդուն անիրաւութիւն չանելը այլ մարդս պիտի լինի աշխատասէր, բաւականացող և համբերող, որովհետև իմաստունը իւր պայծառ լուսով ցոյց է տալիս, որ պարապորդութիւնը, շռայլութիւն և զեղխութիւնը տգիտութեան պտուղներ են որոնք մարդուն զրկում են առողջութիւնից, և խօստանում է մարդուն պատուի և կայքի անապահովութիւն: Բայց՝ երբ որ մարդը իւր կեանքը իմաստութեան առաջնորդութիւնով առաքինութեան ճանապարհի օրէնքով կարգադրել է, այն ժամանակ նորա կեանքը միշտ լաւութիւնով է անց կենում:

Ուրեմն պիտի համոզուիք, որ ամեն առաքինութիւնները որոնք երջանկութեան պատճառ են, բարոյական գիտութիւն են, որն որ մարդուս մէջ կ'շատանան բարի մտածութիւնով: Հիմայ, մենք եթէ կամենանք մեր միտքը լուսաւորել, մեր դատողութիւնը ուղղել և մեր կամքը և սիրտը օրէնքին հնազանդեցնել, հարկաւոր է գիտութեան հետևիլ և գիտութիւն ստանալու համար որտե՞ղ

պիտի դիմենք, և որի՞ն պիտի ապաւինենք, եթէ ոչ դպրոցին և ուսուցիչներին: Մաքրուհի, քեզ որ դպրոցի անունը այդքան զզուեցնում է, ընդհակառակը ինձ շատ ուրախացնում է: Դասագրքի տողերը, որն որ քեզ դերութեան շղթաներ են թվում ինձ համար կարծես ոսկի մանեակներ և անթառամ ծաղկէ պսակներ են: Նորա համար՝ որ, նորանց մէջ եղած բարի և օգտակար օրինակները, առաջնորդներ են մեր առաքինութեան և չարութիւնից ազատող միջոց: Ուրեմն, օրիորդ, դպրոցը կ'տայ մեզ իմաստութիւն և շնորհք, դպրոցը առաջնորդում է մեզ առաքինութեան ճանապարհով մանգալ և հանգիստ ապրել և այն միայն վայելել մինչև յաւիտեան: Իսկ ձեր յիշած ուրախութիւնները և զուարճութիւնները, որոնք սիրտդ և միտքդ գրաւել են դէպ ունայնութիւններ և մարդուս կենաց մէջ պատահող վտանգներ են և կորստեան որոգայթներ, որոնք տգիտութիւնից առաջ գալով, մարդուն բարեմասնութիւնից ստիպում են զրկել: Այո՛, քեզ ևս կ'զրկեն բոլոր բարեմասնութիւնից, առաքինութիւնից և կ'զրկեն քեզ երջանկութիւնից: Եթէ որ ձեր դաղափարը չփոխէք և իմաստութեան չապաւինէք: Ամենքը, խնդրում ենք, ձեր քաղցր ձայնով մի երգ երգել: Երբ որ պարտաւորում էք կ'երգեմ: (Արուսեակը քաղցր եղանակաւ երգում է):

Հայաստանի տխուր դաշտեր,
Հայաստանի տրտում սարեր.
Քանի յիշեմ ձեր սև օրեր.
Սուր, սուր խոցին սրտիս թռքեր.
Ա՛յ սև դաշտեր, մութ դաշտեր
Վա՛յ սև սարեր, մութ սարեր:

—

Հայաստանի ձորեր, ժայռեր
Հայաստանի վանքեր, բերդեր.
Սրտիս կազդեն հազար ցաւեր
Հոգիս թափեն, բի՛ւր, բի՛ւր վշտեր: Ա՛յ

—

Հայաստանի ճեմարաններ,
Հայաստանի մեծ պալատներ.
Կսկծաբեր կան ի յաւեր,
Հայաստանի գեղեր, քաղաքներ: Ա՛յ

—

Հայաստանի մարդեր, դաշտեր,
Հայաստանի քաղցր հովիտներ.
Ա՛յլ չեն շնչեր անոյշ հովեր,
Ա՛յլ չեն բուրեր քնքոյշ ծաղիկներ: Ա՛յ

—

Հայաստանի համեստ հարսներ,
Հայաստանի օրիորդներ,

Մերկայել են իրանց զարդեր,
Սև են հագել և թուչուններ: Ա՛յ

—

Հայաստանի թոչնոց ձագեր,
Կորուսել են իրենց բոյներ.
Հայաստանի աղայք, աղջիկներ,
«Հա՛յր, Մա՛յր» կանչեն զոր ու գիշեր: Ա՛յ

—

Հայաստանի ոչխարք, գառներ,
Ցիր, ցան ընկել են սար, ձորեր.
Հայաստանի խեղճ հովիւներ,
Կորուցել են իրանց հոտեր: Ա՛յ

—

Հայաստանի նախարարներ,
Հայաստանի քաջ մուսաներ.
Հայաստանեայց յաշխարհն աւեր,
Թող նստին լան, ո՛հ ցաւաբեր: Ա՛յ

—

Հայաստանի վեհ կարիչներ,
Հայաստանի դիւցազուններ.
Գերեզմանաց լսին խորեր,
Մեր աղաղակն ողբն ու վայեր: Ա՛յ

—

Ողբա՛ն Հայրեր, ողբա՛ն Մայրեր,
Թող ողբան քորք ու եղբայրներ.

Եւ թող կանչեն, այս ինչ ցաւեր,
Տիրեցին մեզ յաշխարհ աւեր: Ա՛յ

—

Հայաստանի՛ շատ են վէրքեր,
Շատ են նորա կրած վշտեր.
Հայաստանի աւետաբեր,
Աղաւնին արդ է գուժաբեր: Ա՛յ

—

Լակ, ես արտում, տխուր նստեր,
Ո՛հ, Ախուրեան դեսդն յեզեր.
Ցիշեմ, հեծեմ, ցօղեն աչեր . . . ,
Ո՛հ, ո՞ւր են իմ փառաց օրեր: Ա՛յ

—

Ո՞ւր են իմ վեհ Մասեաց սարեր,
Արարատայ ծաղկած դաշտեր.
Փառաց օրե՞ր, ազատ օրեր,
Հեծեցին և ալիքներ: Ա՛յ

Ո՛հ, չգիտեմ թէ այս պատահմամբ երգուած երգին ո՞ր մասը կամ յատկութիւնը գովեմ որ միանգամայն մեծ արժանաւորութիւն ունի, սորա քաղցր եղանակը թէ դեղեցիկ իմաստը և թէ Հայաստանի հին յիշատակները: Սա մի Հայ գիւղական ազգասէր օրիորդի երգած է, որն որ յայսանի փայլում է բարեյիշատակ հեղինակի հոգւոյ վեհութիւնն և հայրենասիրութիւնը, ճշմարիտ ա-

սած, լսողն սիրաը ազգասիրութեան եռանդով վառում է, և դէպի երկինքն է վերացնում մարդուն. նորա ազգասիրութեան հոգին, իմ սրտիս մէջ խորը տպաւորուեց: Արական սեռի սրտերում քաջութեան հոգի է ներշնչում, և իգական սեռի սրտերում, հայրենասիրութեան և առաջադիմութեան է խրախուսում: Օրիորդ՝, դպրոց գնալու օգտակարութեան վերայ այսքան խօսելուց յետոյ, էլ չեմ կարծում, որ չհամոզուիք և չհաւանիք ուսման հարկաւորութիւնը և չսիրէք դպրոցը:

Մոտրո-ին.— Արդէն թէ ձեր համոզիչ խօսքերից, թէ դիպուածով երգուած երգի ազդեցութիւնից, սիրտս լեցուած, դպրոց շարունակելու և ուսանելու եռանդ եմ զգում սրտումս, ուրեմն շնորհակալ եմ և միանգամայն շնորհապարտ, թէ ձեր եռանդուն և իմաստուն խօսակցութեան մասին, և թէ Աստղիկի այցելութեան, որ իմ այսուհետև դէպի առաքինութիւն դիմելուս պատճառ եղաք:

———— ՀՈՍ ————

Երես	Գոգ:	Սխալ	Ուղիղ
1.	1	փառանձէմ	փառանձեմ
7.	2	գժբաղդաբար	դժբաղդաբար
9.	2	հանրասիրութիւնով	նանրասիրութիւնով
26.	25	հետազօտեցէք	հետազօտեցիք
29.	24	պիտքական	պէտքական
30.	9	իմաստունը	իմաստութիւնը

Հանձնվել
1992

ՀՀ Ազգային գրադարան
NL0257021

ՀՀ Ազգային գրադարան
NL0257020